ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-43

Մեդա Գալստյան
Հայաստանի պետության թանգարան
sedagalstyan@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1918–1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ԸՍՏ ՀՊԹ-Ի ՆՅՈՒԹԵՐԻ)*

Հիմնաբառեր. Հայաստանի Առաջին Հանրապետություն, տնտեսություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, հացահատիկ, կոոպերատիվ տնտեսություն, արհեստանոց:

Ներածություն

Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական պատմությունն այսօր բավարար չափով ներկայացված է: Հաճախ իրադարձությունները ներկայացված են օրերով և ժամերով և այդ հսկայածավալ նյութերի կողքին քիչ ենք հանդիպում ընդհանուր տնտեսությանը, սոցիալական կյանքին վերաբերող հրապարակումներ, գրքեր, հոդվածներ: Այդ էր պատճառը, որ հերթական քաղաքական պատմության մեջ խորանալիս աչքիս զարնեցին Հայաստանի պատմության թանգարանի (այսուհետ՝ ՀՊԹ) արխիվներում (Ադոյի, Քաջազնունու և այլոց) և ֆոնդերում առկա փաստաթղթեր, որոնք վերաբերում են Հայաստանի Առաջին Հանրապետության տնտեսությանը և կարող են նոր շունչ հաղորդել տվյալ ժամանակահատվածի ուսումնասիրմանը: Ամփոփ ներկայացնենք ՀՀ-ում տիրող սոցիալ-տնտեսական վիճակը և մանրամասն անդրադառնանք տնտեսության որոշ ճյուղերի գործունեությանը՝ ըստ ՀՊԹ-ի արխիվների:

Սոցիալ-տնտեսական դրությունը Հանրապետությունում

Հայաստանի Առաջին Հանրապետությունը ծնվեց սոցիալ – տնտեսական ծանր պայմաններում: ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին Հայաստանը բնորոշել էր որպես «անձև քաոս և ավերակների կույտ»: Պատճառները շատ էին, թվարկենք մի քանիսը՝ Առաջին համաշխարհային պատերազմը, Ռուսական կայսրության կազմալուծումը, Ռուսաստանում ընթացող քաղաքացիական կռիվները, թուրքական արշավանքները, տարածքային կորուստները և այս ամենի արդյունքում դրսից ոչ մի օգնություն, ամեն ինչ պետք է արվեր սեփական ուժերով:

Հայաստանի Հանրապետությունն «ավելի շուտ, գաղթականական կայան էր, ամբողջ երկրում շուրջ 450 000 գաղթական էր թափված, որից մոտ 40 000-ը՝

* Ստացվել է 14.03.2023 թ., ուղարկվել է գրախոսման 20.04.2023 թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.:

Երևանում, շատերը՝ փողոցների և ավերակ շենքերի մեջ: Հաց չէր ճարվում, ժողովուրդն ապրում էր ինչպես կարող էր...» (Վրացյան 1993, 199): 1918 թ. սեպտեմբերի 28-ին ընդունվել էր «Օրենք կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 86, 3), որով պետությունը պարտավորվում էր գաղթականներին ապահովել աշխատանքով կամ հողով, հակառակ դեպքում՝ վճարել նպաստ:

Ծանր էր սոցիալ-տնտեսական դրությունը նաև գյուղերում: «Ցանքատարածությունները կրճատվել էին 4,2 անգամ, ոռոգելի տարածքները մեկ երրորդով» (ՀԱԱ, ֆ. 205, ց. 1. գ. 750, թ. 3): Չէին գործում արդյունաբերության ձեռնարկությունները՝ Ալավերդու, Ղափանի պղնձահանքերն ու ձուլարանները: Վերահսկողությունից դուրս էին մնացել Նախիջևանի, Կողբի, Կաղզվանի աղահանքերը: «Կողբը սովի ճարակ է դարձել, – ճչում էին աղահանքից, հացի գրվանքը 15 ր. է» («Հայաստանի աշխատաւոր» 1919, № 56, 3): Թուրքերը թալանել էին Ալեքսանդրապոլի միակ երկաթուղային դեպոյի գույքը, որը Հայաստանի սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկություններից էր:

Թիֆլիսում ձևավորված և 1918 թ. հուլիսին Երևան տեղափոխված կառավարությունն է սկսում պետության կառուցումը, ըստ վարչապետ Հովհաննես Քաջազնունու՝ իրենք չեն հաջորդում նախկին կառավարությանը և հարկադրված են ամեն բան սկսել զրոյից: Երկրի գոյատևման ու զարգացման երաշխիքը՝ տնտեսությունը, գրեթե զրոյական մակարդակի վրա էր: Ներկայացնելով երկրում առկա իրավիճակը՝ ականատեսը նշում է. «…Եզներով ու գոմեշներով լծված սայլեր, ավանակներ, իսկ քաղաքներում՝ կառապաններ, որքան հիշում եմ ավտոմեքենա չկար, ամեն դեպքում ես չեմ տեսել, գուցե կառավարությունն ուներ, չգիտեմ»: (Թադևոսյան 2015, 52):

Փոքր-ինչ բարվոք վիճակում էր սննդարդյունաբերությունը, ուր գերակշռող էին գինու, կոնյակի, օճառի, ծխախոտի և պահածոների գործարանները, որոնց մեծ մասը քայքայվեց ու լուծարվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ թուրքական ներխուժումների հետևանքով: Նշենք, որ գինու-կոնյակի նախկին 20 գործարաններից 1918–1920 թթ. գործում էին ընդամենը Շուստովի երկու ձեռնարկությունները: Գինու-կոնյակի գործարանները պետականացվում են:

Հանքարդյունաբերությունն էլ գրեթե կանգ էր առել: 1920 թ. տվյալներով Ալավերդու պղնձահանքերում աշխատում էր ընդամենը 185 բանվոր, մինչդեռ, նախքան պատերազմը, այդ թիվը հասնում էր 3000-ի: 1920 թ. «Արարատ» գործարանում աշխատում էր 25–27 բանվոր: Այստեղ աշխատողների աշխատավարձը միայն 2 կամ 3 ֆունտ հացի փող էր:

Գործազրկությունը Հանրապետությունում համատարած բնույթ էր կրում, 547.375 մարդ, ըստ վիճակագրության, նպաստ էր ստանում:

Քիչ թե շատ գործում էին ջուլհականոցները, գորգագործարանները, կաշվեղենի մշակման արհեստանոցները, որոնց արտադրանքն էլ խիստ կրճատվել էր՝ կապված մշակովի դաշտերի ամայացման ու անասնագլխաքանակի կրճատման հետ:

Փոքր-ինչ շտկվեց գյուղացու վիճակը, երբ 1919-ին կարողացավ նորմալ ցանք կատարել և բերք ու բարիք ստանալ:

ՀՀ երկրորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը գրում է. «Իմ առաջին տպաւորութիւնները Երևանէն ծայր աստիճան ճնշող էին – ձմեռ, ձիւն, ցուրտ, ցեխ փողոցներու մէջ. քաղցածներու բազմութիւններ հրապարակներու վրայ, մեռնող գաղթականներ փողոցներու անկիւնները, պատերու տակ, մթերքներու սպառնալից բացակայութիւն, ճամբաները փակուած և ամէն տեսակ արգելքներ Հայաստանի ժողովուրդը պարենաւորելու դէմ» (Խատիսեան 1968, 117)։ Ալ. Խատիսյանը վկայում է. «Ստեղծվեց մի դրություն, երբ Հայաստանը ուներ 3 պարենավորման նախարար[1] և ոչ մի պարենավորում» (Վրացյան 1993, 207)։

Այն որ, հայ ժողովուրդը «երբեք այնքան ծանր ու հուսահատական չի եղել», որքան այդ ժամանակ, 1919 թ. գրում է «Յառաջ» թերթը («Յառաջ» 1920, № 5, 2)։ 1918 թ. օգոստոսի 8-ին կառավարությունը երկիրը հայտարարում է «խոլերայի կողմից վտանգված», որին անկախության առաջին 6 ամիսներին, Վրացյանի տվյալներով, զոհ է գնում 180.000 մարդ։ Տեղին է հիշել, որ բծավոր տիֆի զոհ դարձավ նաև ՀՀ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը՝ 1919 թ. հունվարի 29-ին։ Այդ տարվա տիֆի զոհերի թիվը 3972 է։ Բարվոք չէր դրությունը նաև 1920 թ.։ Մասնավորապես, «հունվարի 5-ին Երևանում փողոցներից հավաքված է 3 դիակ, տներից՝ 10 դիակ, և հիվանդանոցներից՝ 52 դիակ, ընդամենը՝ 65 դիակ» («Յառաջ» 1920, № 5, 2)։ Մի բոպե փորձենք կենտրոնանալ այս թվերի վրա՝ օրական 65 դիակ՝ միայն մայրաքաղաքում, պետության աչքի առջև։ Հապա ինչ է կատարվում գավառում, հետ ընկած անկյուններում, ասենք՝ Դարալագյազում կամ Նոր Բայազետում։ Այս տեղերից ստացված տեղեկություններն ուղղակի սարսափելի են, կատարյալ կոտորած է տեղի ունենում մեր երկրում։ Սովն ու ցուրտը հնձում են անխնա ու անհաշիվ և ամեն օր գերեզման են իջնում հազարավոր կյանքեր։ Պիտի ենթադրել, որ թվերը չափազանցված չեն, քանի որ գրողը ընդդիմադիր թերթ չէր և երկրի վրա «ցեխ շպրտելու» խնդիր չուներ։

Նման պայմաններում նորաստեղծ հանրապետության ղեկավարները պիտի կարողանային պետություն կերտել, ինչը մեծ դժվարությամբ, բայց հաջողվեց։ Հաջողվեց գաղթականության, 50 հազար որբի, հայ-վրացական բախման, մուսաֆաթական Ադրբեջանի ու տեղաբնակ 350 հազար մահմեդականների սարքած ամենօրյա դավերի, բոլշևիկյան սադրանքների, երկաթգծի ավելի հաճախ չգործելու, նաև՝ նավթի, մազութի, պարենամթերքի, առաջին անհրաժեշտության ապրանքների բացակայության պայմաններում։ Հայաստանի Հանրապետությունում «ապրանք չկար, իսկ դրամը գնալով արժեզրկվում էր, 8 ամսվա ընթացքում 50 անգամից ավելի։ Պետական ծախսերը գերազանցում էին եկամուտները, 1919 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1920 թ. հունվարի 1-ը պետական գանձարանն ունեցել է 30 մլն մուտք և 300 մլն ծախս» (Չալխուշյան 1923, 12)։

Այս դժվարին իրավիճակում 1919 թ. ՀՀ կառավարությունը ջանքեր գործադրեց բարելավելու գյուղացիության վիճակը, կառուցվեցին ջրանցքներ, բացվե-

1 ՀՀ պարենավորման նախարար Լևոն Ղուլյանը մեկնեց Թիֆլիս, սակայն չվերադարձավ։ Նախարարի լիազորությունները ստանձնեց Սամսոն Հարությունյանը, ով նույնպես մեկնեց Թիֆլիս, ինչի արդյունքում նախարարի պաշտոնակատար նշանակեցին Գևորգ Մելիք-Ղարագյոզյանին։

ցին գործարաններ և արհեստանոցներ՝ օճառի, կաշվի, կոնյակի, հախճապակու, ծխախոտի: «1919 թ. վերջերին Հայաստանում գործում էին ծխախոտի 5 ֆաբրիկա, արդեն 1920 թ. սկզբներին Հայաստանում գործում էին ավելի քան 70 գործարաններ, 280-ից ավելի կոոպերատիվներ՝ 112 հազար անդամներով, պետականացվեց Շուստովի գործարանը, 1919 թ. ստացվեց 1,7 միլիոն աստիճան խաղողի սպիրտ» (Վիրաբյան 2011, 32):

1919 թ. հունվարին իշխանություններն օգնության խնդրանքով դիմեցին դաշնակից պետություններին: 1919 թ. փետրվարին ԱՄՆ մեկնեց վարչապետ Հովհ. Քաջազնունին, իսկ մայիսին ԱՄՆ-ից ստացվեց 1 295 243 փութ ալյուր, 256 758 փ. ցորեն, 125 000 փ. լոբի, 68 563 փ. բրինձ, 5 950 000 տուփ խտացրած կաթ, 44 000 փ. շաքար: ԱՄՆ-ից ստացվող ալյուրից 238 449 փութ ուղարկվեց Ախալքալաք: Ալյուրի մի մասն էլ գրավեց վրաց կառավարությունը, իբրև փոխադրության վարձագին» (Վրացյան 1993, 256): Շատ կարևոր էր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմի) դերը, ինչի շնորհիվ փրկվեցին շատ սովյալներ:

«Ռազմիկ» թերթը գրում է. «Դու գիտես, թէ ինչ չարչարանքով և արիւնքրտինքով մեր աղբէր գիւղացիները էս տարի ցանք են արել. սերմացու չը կար մեր կառավարութիւնը հազիւ կարողացաւ ալիւրի, շաքարի, չթի հետ փոխելով մի քիչ սերմացու ձեռք գցել և էդ բաժանեց գիւղերին, ամենքին ընկաւ կէս-կէս փութ, եզ ու ուրիշ լծկան չը կար, գութան ու արոր չկար, օսմացին բա՞ն էր թողել» (Ռազմիկ 1920, հունիս 16, 10): ՀՊԹ-ում պահվող Սմբատ Բորոյանի՝ (Մախլուտո) հուշերում տեղեկություն կա Կարիշ ու Կորուշ եղբայրների մասին, ովքեր կառավարության կողմից գործուղվել են Պարսկաստան սերմացու գնելու, և անհաջողությամբ վերադարձել են: Այնուհետև հուշագիրը նշում է. «Հայ կառավարությունը ուշ իմանալով, որ ես Պարսկաստանի երկրուն և մեծերուն լավ ծանոթ եմ, կը հրավիրե զիս, այսինքն նախարար Մանասյան[2] անձամբ կուգա ինձ մոտ խնդրելու թե պետք է սերմացու գնելու երթամ Պարսկաստան» (Բորոյան, 2021, 159): Սմբատին Պարսկաստանում շատ լավ են դիմավորում և ափսոսանք են հայտնում, թե ինչու նախապես ինքը չէր եկել այդ առաջարկով: «Ահա չանցան քանի մը օրեր, Սարդար խան հրաման ըրավ գյուղերու խաներուն սերմացու տրամադրել Սմբատ խանին, զօր շատ չանցած յոթանասուն վագոնե հասավ մեր գնումները: Թավրիզեն պատասխան ալ եկած էր, որ Թումանով[3] տունը հանձն կառնե վճարել, որքան որ սերմացու գնվի Հայաստանին համար» (Բորոյան 2021, 159) ...Վերադարձին Սարդար խանից նվեր են ստանում նաև մեկական ձի և «1000 թուման» սուրճի դրամ (Բորոյան 2021, 159):

Այդ ընթացքում հայ ժողովուրդը վերջնականապես սպառեց հին տարիների իր խնայողությունը, իսկ շատ վայրերում վաճառքի հանեց իր ամենաանհրաժեշտ

2 Սարգիս Մանասյան – 1919 թ. եղել է ՀՀ ներքին գործերի նախարար, սպանվել է 1920 թ. բոլշևիկների կողմից:

3 Հայկական ծագման վրացական իշխանական տոհմ, սերվել են Մամիկոնյաններից, մի ճյուղը 12–13-րդ դարերում գնացել են Դսեղ՝ հիմնելով իրենց իշխանությունը (Թումանյանների տոհմը):

իրերն ու անասունները, երկրագործությունն ու անասնապահությունը Հայաստանում չքանալու աստիճանի հասավ: Բամբակի, օղու, նույնիսկ Հայաստանի հարստությունը կազմող հարուստ աղահանքերը մնացին անմշակ, հետևապես անպետք արտաքին շուկայի համար, չենք խոսում պատերազմի հետևանքով սովից ու համաճարակներից առաջացած տնտեսական ավերածություններից: Կարևոր է աղբյուրներից ծանոթանալ գյուղատնտեսության մի քանի խոշոր ճյուղերին՝ հացաբույսերի մշակություն, անասնապահություն, բամբակագործություն, բրնձի մշակույթ, ծխախոտագործություն, շերամապահություն, մեղվաբուծություն:

ՀՊԹ-ում պահվող նյութերը, հատկապես Ադոյի[4] արխիվը օգնում է մեզ նոր լույսի ներքո ուսումնասիրել տնտեսության զարգացման վերոնշյալ ճյուղերը: Վարելահողերի հետ կապված տնտեսագետը հանգում է հետևյալին, որ վարելահողերի քանակը բաժանելով գյուղատնտեսությամբ զբաղվող ազգաբնակչության վրա, 1 շնչին գալիս է 0,56 կամ դեսյատինից քիչ ավել հողաբաժին: Առանձին շրջաններում, օրինակ Ալեքսանդրապոլի և Նոր-Բայազետի գավառներում, որտեղ գյուղատնտեսության բացառիկ զբաղմունքը կազմում է հացահատիկների մշակությունը, շնչին միջին հաշվով գալիս է 6 տասնորդական դեսյատին վարելահող, իսկ Դիլիջանի գավառում վարելահողի շնչային նորման իջնում է նույնիսկ 0, 36 դեսյատինի: Հողային այսպիսի պայմաններում հնարավորություն չի լինում նույնիսկ հողը հանգստացնել, և անընդհատ մշակվելով այն ուժասպառ է լինում: Երկրորդ՝ գյուղացին չի անցնում ռացիոնալ տնտեսության, նրան դեռ խորթ են, լավագույն դեպքում անմատչելի են մշակման նոր մեթոդները, մեքենաների գործադրությունը: Հայաստանը վարելահողերի համեմատությամբ ավելի հարուստ է արոտատեղերով: ՀՀ 8 գավառներում համաձայն պաշտոնական տվյալների, «Յեղած անասունների թիվը հասնում է խոշոր յեղջյուրավոր կենդանիներ 356 000, մանր եղջյուրավոր՝ 514 000: Եթե այն բաժանես այդ 8 գավառների տնտեսությունների վրա, յուրաքանչյուր տնտեսության հասնում է 3 նույնիսկ 3-ից էլ պակաս խոշոր եղջյուրավոր կենդանիներ: Յերկուսը միասին կազմում է 7 և տնտեսությունը հաշվելով 5 շնչից բաղկացած, շնչին գալիս է 1,4 կենդանի, որ ոչ մի դեպքում մխիթարական լինել չի կարող, այսպես էր պատկերը նաև պատերազմից առաջ» (ՀՊԹ, Ադո, ՆՊՖ 839/218, 5):

Դեռ կանդրադառնանք տնտեսագետի վերլուծություններին, սակայն պակաս կարևոր չեն Հովի. Քաջազնունու գրառումներն իր իսկ նոթատետրում[5], որոնք մեզ խորհելու առիթ են տալիս: Կարծում ենք՝ դա էլ հետաքրքիր վիճակագրություն է ՀՀ-ի տնտեսությունը բնութագրելու առումով. «1919 թ. սպասվում է հացահատիկի՝ 337 000, գարու՝ 15 000 և բրնձի՝ 8000 տոննա բերք, ընդհանուր առմամբ՝ 360 000 տոննա: 1920 թ. ցանքի համար պետք է պահուստավորել հացահատիկ, գարի, բրինձ՝ մոտ 150 000 տոննա: Դրանից զատ գարու մի մասը պետք է հատ-

4 Ադո (Հովհաննես Գրիգորի Տեր-Մարտիրոսյան) – պատմաբան, տնտեսագետ: Նրա ուսումնասիրությունները վերաբերում են հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի և ազատագրական շարժումների պատմությանը:

5 Քաջազնունու նոթատետրը իր ձեռագրով, նշումներ տնտեսության որոշ ճյուղերի և բաշխման հետ կապված, պահվում է ՀՊԹ-ում (ՀՊԹ, ՆԳՊ, 349):

կացնել ձիերի կերակրմանը, 1919 թ. տվյալների համաձայն, Հայաստանի տարածքում կար մոտ 100.000 ձի, որոնց կեսը սատկել է կերի բացակայությունից: Եթե մեկ ձիուն կերակրելը հաշվենք օրական 1 կգ, ապա 50 հազար ձիուն տարեկան անհրաժեշտ կլինի 50,000 × 0,4 =20,000 տոննա (ՀՊԹ, ՆԳՊՖ 349, 22):

Ստացվող բերքից եթե հանենք ցանքի հացահատիկը, ձիերի կերը, բնակչության պարենամթերքը, մնում է ….. 190.000 տոնա:

ՀՀ տարածքում կար 2 մլն բնակչություն (Հովի. Քաջազնունու արխիվ, ՀՊԹ, ՆԳՊՖ, 349, 22), եթե հաշվել մեկ մարդուն միջին հաշվով հասանելիք պարենը, կստացվի կես կգ հացահատիկ, այսինքն տարեկան ողջ բնակչությանը անհրաժեշտ է 366.000 տոննա: Հետևաբար, պարենային հացահատիկի պակասությունը 1919 թ. համար կազմում է 176.000 տոննա: Սա կարծում ենք խոսուն ցուցանիշ է Հայաստանում հացաբույսերի մշակման հետ կապված: Վարչապետը գտնում է, որ այդ պակասության մի մասը կլրացվի 20.000 տոննա հացահատիկով, որը Ամերիկայի կառավարությունը պայմանավորվել է առաքել Հայաստան: Այդ լրացմամբ պակասությունը կկազմի 150.000 տոնա: Հայաստանի Հանրապետության «ունեցած բերքի՝ սեփական հացով (190.000 տոնա) 1919 թ. բնակչությունը կարելի է կերակրել 6,5 ամիս» (Հովի. Քաջազնունու արխիվ, ՀՊԹ, ՆԳՊՖ, 349, 23): Առաջին վարչապետը մտահոգ էր ոչ միայն հացի եղած քիչ պաշարներից, այլև այն փաստից, որ պետք է հաշվի առնել դեպի Անդրկովկաս բեռների տեղաշարժվելու դժվարություններն ու դանդաղությունը և ստացված օգնությունը ուշ կարող է հասնել բնակչությանը: Իր նոթատետրում նշել է, որ նավը միջինով տեղ կհասցնի 5 հազարական տոննա բեռ, անհրաժեշտ կլինի 30 նավ... և այլն: Ուսումնասիրելով վարչապետի գրառումները տնտեսության որոշ ճյուղերի հետ կապված՝ կարելի է հանգել հետևյալին, որ 1919–1920 թթ. համար ոչ միայն չէր բավարարում հացը, հատիկավոր կուլտուրան, այլև բնակչությունը սովի կարող էր մատնվել, եթե հասցեագրված օգնությունը ուշանար, իսկ դրա համար կային բոլոր նախադրյալները՝ հայ-վրացական սահման, նավերի պակաս, բեռների տեղաշարժի դժվարություններ և այլն:

Ըստ Ադոյի վերլուծությունների՝ ՀՀ տարածքում անասնապահության զարգացման համար կային հատուկ վայրեր, մասնավորապես «վոչխարաբուծության համար հարմարագույն վայրեր հանդիսանում են գլխավորապես Նոր Բայազետի, Դարալագեազի, Զանգեզուրի գավառները և Արագածի բարձունքները իրենց ալպիական գոտիներով: Խոզաբուծության վայր հանդիսանում են Դիլիջանի և Զանգեզուրի անտառոտ մասերը» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839): Գյուղատնտեսության մեջ հացահատիկների մշակության հարմարագույն վայր էր հանդիսանում միջին գոտին, Շիրակը, Փամբակը, Նոր Բայազետի, Դիլիջանի, Երևանի, Էջմիածնի գավառների որոշ մասերը:

1918 թ. գյուղատնտեսության զարգացման նպատակով ընդունվել են մի շարք օրենքներ՝ որոնցից «Օրենք բամբակի մենավաճառության մասին», դեռևս 1918 թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի կառավարությունը որոշեց իր ձեռքը վերցնել բամբակի վաճառքի մենաշնորհը՝ մեկ փութը 49 ռուբլի 50 կոպեկով, պետականացնելով երկրի ամբողջ բամբակը, որը կառավարական հասույթի միակ աղբ-

յուրն էր: Իհարկե այս օրենքն էլ բուռն կրքեր գրգռեց և քննադատեցին կառավարությանը: Ավելի ուշ պետության մենաշնորհ է դառնում աղի արտադրությունը[6]: Մեր ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ բամբակի կուլտուրան զարգացում է ապրել պատերազմից առաջ նախկին Երևանի նահանգում: Համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ «Հայաստանում եղել են մոտ 118 բամբակազտիչ գործարան պրիմիտիվ կարգ ու սարքով...» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/246, 293):

Փորձենք տալ մի փոքրիկ համեմատություն: Ըստ պաշտոնական աղբյուրների՝ 1914 թ. «ցանվել էր 44 000 դեսյատին տարածություն և արդյունքում ստացվել էր 710 000 փութ մաքրած բամբակ, իսկ թե ինչ արժեք ուներ այն տնտեսական կյանքում, կարելի է միայն նշել, որ բամբակը ամբողջովին արտահանվում էր Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները և փութը վաճառվում էր 14–15 ռուբլի ոսկով: Այսպիսով, ամբողջ բերքը վերածվում էր 10 միլիոն ռուբլի ոսկու: Այս առումով իբրև մրցակից հանդես էր գալիս միայն Գանձակի նահանգը: Սակայն 1917–1921 թթ. բամբակագործությունը Հայաստանում կանգ առավ, դա պատերազմի հետևանքն էր, երբ արդյունաբերությունն անշարժ էր և սովը հարկադրեց բոլոր հողերը վերածել հացաբույսերի մշակման: Արդեն «1920-ից Հայաստանում վերսկսվեց բամբակագործությունը, սկզբնական շրջանում ցանվել էր 500 դեսյատին, ապա 4000 դեսյատին հող և 1923 թ. սպասվում էր 60 000 փութ բերք» (Статистика Хлопководства в Закавказском крае за 1914 г. С. М. Тимофеева (տե՛ս Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ 839/218, 11)):

Սակայն, մի կողմ թողնելով ապագայի հեռանկարները, բամբակագործության հնարավորությունների համար կարելի էր եզրակացնել, որ Հայաստանում այդ տարիներին բամբակագործությանը կարելի էր հատկացնել «25000 դեսյատին տարածություն, վորը կտա 350–400 000 փութ մաքրած բամբակ: Սակայն այդ ծավալով բամբակ մշակել հնարավոր կլիներ այն դեպքում, յերբ բամբակագործ գյուղացիությանը օգնության գա պետական նպաստը ավելի մեծ չափով, քան մինչ այժմ էր» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ 839/218, 12): Ընդ որում պատերազմի և հատկապես թուրքական կրկնակի արշավանքների հետևանքով գյուղացիությունը կորցրել էր թե՛ կենդանի, և թե՛ մնացյալ գույքը, և այդ պարագայում նշված ծավալով բամբակագործությունն անհնար էր զարգացնել: Անդրադառնանք տնտեսության մյուս ճյուղին՝ շերամապահությանը, որն առաջին հերթին պայմանավորված էր թթենիների միջավայրի հետ: Այդ շրջանում այս ճյուղը զբաղեցնում էր հետին տեղ:

Մեր ձեռքին է ՀՊԹ-ում պահվող շերամապահության զարգացման համար այդ օրերին կազմված հատուկ հարցաթերթ, որով կարելի է ենթադրել, թե ինչքան մանրակրկիտ ուշադրություն էր դարձվում այս ճյուղի զարգացմանը. բերենք հարցաթերթից մի քանի կետեր ՝ 1. «Ձեր թթանոցը շերամի քանի գրամ հնդի(սերմի)

6 ՀՀ ֆինանսների (ելևմտական) նախարարի օգնական Հովակիմ Մելիքյանի ղեկավարությամբ մշակվեցին պետական աղահանքերի օգտագործման ձևերը և այլ ծրագրեր: Օլթիի աղահանքերի մասնագետ էր Լևոն Հովհաննեսի Խատիսյանը՝ վարչապետի եղբայրը («Յառաջ» 1920, փետրվար, № 877, 4):

վորդեր կարող է կերակրել. 2. Որտեղից ես ձեռք բերել շերամի հունդը (սերմը), ինչ՞ չ տեսակի են 3. Յե՞րբ է բացված շերամի հունդը, ի՞նչ ձևով է բացված՝(մեքենայով, ինկուբատորով, տաքացնելով, գրիր թե դու ի՞նչ ձևով ես բացել), հիվանդաց՞ել են վորդերը, Քո բացած սերմից ընդամենը ինչքա՞ն թաց բոժոժ ես ստացել, Շերամապահությունը քեզ համար գտնու՞մ ես արդյունավետ» (ՀՊԹ, ՆՊՖ, 1308/28, 1): Թանգարանում է պահվում Մեղրիի Շահուվարյանների շերամի որդի ֆիրմայի պիտակը (ՀՊԹ, ՆՊՖ, 1222):

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ շերամ արտադրում էր Զանգեզուրի գավառը, տարեկան 6000 փութի սահմաններում, Ղազախի գավառը՝ 3000 փութի սահմաններում: «Այս 2 գավառներն էլ 1918–20-ականներին բավականին հետ մնացին՝ միասին տալով մոտ 3000 փութ» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/218, 15): Հայաստանի շերամապահության հնարավորությունները հաշվի առնելով՝ կարելի է ասել, որ 3000 կամ 5000 փութ կոկոնի բերքը չնչին քանակ էր: Հայաստանն ի վիճակի էր ունենալ ավելին՝ զարգացնելով շերամապահությունը Երևանի, Դարալագյազի, Դիլիջանի և Զանգեզուրի գավառներում:

ՀՀ տարածքում գյուղատնտեսության զարգացման կարևոր ճյուղ էր նաև մեղվաբուծությունը, որի զարգացման համար առավել կարևոր վայրեր են եղել Լոռին, Փամբակը, Դարալագյազը, Զանգեզուրը և Դիլիջանը: Բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ մեղվաբուծության ասպարեզում Հայաստանը չպիտի ունենար մրցակից: Այդ ասպարեզում Երևանի նահանգը զիջում էր Կարսի նահանգին: Նոր ձևի փեթակները Երևանի նահանգում կազմում էին ընդհանուրի 21 տոկոսը, Կարսի շրջանում՝ 28 տոկոսը, որոնք մի քանի անգամ ավել մեղր են տալիս, քան հինը: Եթե փնտրենք առաջնության պատճառները Կարսի շրջանում, ապա պիտի արձանագրենք, որ մոլոկան ազգաբնակչության շնորհիվ է, որ հաշվի են առել փեթակների այս նոր ձևը: Պաշտոնական տվյալները բացակայում են, սակայն Ադոն նշում է, որ վստահելի մասնավոր աղբյուրներից հայտնի է. «Լոռվա գավառում հաշվում են 6,500 փեթակ փոքր բացառությամբ նոր ձևի: 1000 բնակչին գալիս է 88 փեթակ» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ 839/218, 17), այն 3 անգամ ավելի էր քան Երևանի նահանգում՝ պատերազմից առաջ: Սակայն այս ճյուղը ևս չտվեց սպասված արդյունքները:

Հետաքրքիր մեկնաբանությունների ենք հանդիպում Ադոյի մոտ, երբ ուսումնասիրում ենք ծխախոտագործության ճյուղը: Այն հարցին, թե գոյություն ունեցե՞լ է արդյոք Հայաստանում ծխախոտի մշակություն, պատասխանում է և՛ այո, և՛ ոչ: Այո, որովհետև ծխախոտ մշակվել է Հայաստանում, ոչ, որովհետև ծխախոտ մշակվել է Հայաստանում այն քանակով, այն ձևով, որը հավասար է չմշակելուն: Օրինակ է բերում. «1914 թ. և հետո Անդրկովկասը տվել է տերևավոր ծխախոտ 860 000 փութ, վորից Յերեվանի նահանգին ու Կարսի շրջանին գալիս է միմիայն 6, 400 փութ, կամ 1 տոկոսից պակաս: Բերք յուրաքանչյուր դեսյատինից ստացվել է ընդամենը 36 փութ ծխախոտ, մինչդեռ Անդրկովկասի մյուս շրջաններում բերք ստացվել է մինչև 100 փութ ծխախոտ» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, 839/205, 1, 2): Վերլուծելով ծխախոտագործության թերությունները՝ նշում է, որ մի անթույլատրելի բան կա այստեղ, դա այն է, որ ծխախոտը մեզանում, բերքը հավաքելուց հետո չի

ենթարկվում, այսպես կոչված թթվեցման պրոցեսին, մի ընթացք, որից հետո միայն ծխախոտը ստանում է անհրաժեշտ համն ու հոտը: Սակայն հույս է հայտնել, որ կարելի է Հայաստանում մշակել այդ մշակաբույսը, և 1920-ական թթ. Զարբախի հողերից տրվել է 20 դեսյատին պլանտացիա այն մշակելու համար:

Պակաս կարևոր չէր Հայաստանի համար կաթնատնտեսությունը. ըստ թանգարանում եղած նյութերի՝ կանգ առնենք հատկապես պանրագործության զարգացման վրա: Հայաստանը մի կողմից գյուղատնտեսական երկիր էր, ուներ բոլոր տվյալները զարգացնելու անասնապահությունը, հատկապես կաթնային տնտեսությունը, որպես արդյունաբերության ճյուղ: Մյուս կողմից Հայաստանը գտնվում էր հետամնաց վիճակում, ռացիոնալ կաթնատնտեսություն գոյություն չուներ, եղած կաթնատնտեսությունը կրում էր պրիմիտիվ ձև, նա շատ հեռու էր արդյունաբերական ճյուղ դառնալուց իր այդ վիճակում: Ահա մեր երկրի ինքնաժխտողական վիճակը հարկադրում է մի անգամ էլ կանգ առնել նրա տնտեսական հնարավորությունների վրա և մատնանշել, թե ինչքան հնարավորություններ են թաքնված, որոնց հայտնաբերելը այսօր հրամայական է դառնում: Փորձենք մանրամասնել՝ ներկայացնելով հիմքերը կաթնատնտեսության մի ճյուղի՝ շվեյցարական տեսակի պանրագործության համար: Այդ ճյուղը Անդրկովկասում ունի մի քանի տասնյակ տարիների պատմություն: Առաջին փորձը այդ ուղղությամբ կատարվել է նախկին Բորչալուի[7] գավառում: Համառոտ ծանոթանանք շվեյցարական պանրի գործարանի ստեղծման պատմությանը: Այդ գավառին (Բորչալու) սահմանակից Ախալքալաքի գավառում գտնվում էր Ալեքսանդերսգիլֆ[8] գերմանական գաղութը: 1863 թ. ցարական կառավարությունն «այդ գաղութի համար Շվեցարիայից հրավիրում է հատուկ մասնագետ պանրագործ ազգանունը՝ Զաբոլդա, բացի այդ կաթնատնտեսության համար կարևոր պարագաներ ձեռք բերելու նպատակով գաղութին տալիս է 2000 ռուբլի նպաստ: Փորձն ունեցավ մեծ հաջողություն, սկզբնական շրջանում այդ գործարանը տարեկան արտադրում էր, 600 փութ շվեյցարական պանիր, իսկ հետագայում նրա արտադրությունը հասնում էր 3000 փթի» (Ադոյի արխիվ[9], ՀՊԹ, ՆՊՖ 839/218, 261):

Այդ շրջանի Մահմուդլի գյուղում կառավարությունից ստանալով որոշ նպաստ, նման գործարան է հիմնել ֆոն Կուչենբախը: Այս 2 գործարանները առաջին պիոներներն էին մեր երկրի ռացիոնալ կաթնատնտեսության ոլորտում: Ֆոն Կուչենբախը Շվեյցարիայից հրավիրում էր մասնագետներ, ովքեր աշխատելով նրա գործարանում, հաճախ թողնում էին այն և ինքնուրույն կամ ուրիշների ընկերակցությամբ հիմնում էին նոր գործարաններ: Այսպես, Ամմետեր եղբայրները, Կուչենբախից հեռանալով, նույն շրջանի Կարա-բուլաղ (սև աղբյուր) գյուղում հիմնել են սեփական գործարան, որտեղ արտադրում էին տարեկան մինչև 1800 փութ

7 Գավառը ստեղծվել է 1880 թ.՝ անջատվելով Թիֆլիսի նահանգից: Նրա մեջ մտել են Երևանի նահանգի տարածքներից Ջալալօղլին (Ստեփանավան) և Վորոնցովկան (Տաշիր), ինչպես նաև որոշ շրջաններ Թիֆլիսի նահանգից:

8 Ալեքսանդերսգիլֆ – (Թրիալետ):

9 Պանրագործությունը Հայաստանում 1924, 259–268:

պանիր, սրանից մեկ տարի անց նույն շրջանի Ղամարլու (Մեծամոր գյուղ) գյուղում Ինդիգերը հիմնել է նոր գործարան: Այնուհետև 1900 թ. մոլոկան Նազար Դեսաևը Վորանցովկայում հիմնում է գործարան, որոշ ժամանակ անց նույն տեղում գործարաններ են հիմնում Կեզել-Գոտլիր, Լենգարդ-Մատթևոսյան ընկերությունները և մեկ գործարան էլ հիմնվում է Կարսի մոտ՝ Պետրովկա գյուղում: Այստեղ գործի ղեկավարությունը հանձնված էր փորձված կաթնատնտես Դիլանյանին, 10–15 տարի անց այս արտադրությունը հասնում է մեծ չափերի ու հաջողությունների:

Համաձայն տնտեսագետի տեղեկությունների՝ շվեյցարական պանիր արտադրվում էր 86000 փութ, 1 փթի արժեքը՝ 10–15 ռուբլի, եթե վերածենք դրամի՝ հաշվելով միջին գներով՝ 12 ռուբլի 50 կոպեկով հավասար է 1, 075,000 ռուբլի, արաժան՝ 13, 875 ռուբլի և այլ մթերքներ՝ սերուցքային յուղ, պանրի մնացորդի յուղ և այլն: Կարևոր է իմանալ՝ Անդրկովկասի ոռ շրջանները ինչպիսի մասնակցություններ են ունեցել այս գործընթացին: Գործարանների թիվը և վերամշակված կաթի քանակը բաժանված էր ըստ գավառների, Բորչալուի գավառում՝ 34 գործարան՝ 600 000 փութ կաթ: Արտադրված պանրի 54 տոկոսը միայն Բորչալուինն է:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին գոյություն ունեին գործարանային կաթնատնտեսություն վարելու 3 ձևեր՝

ա) «Անհատական կամ ընկերական ձևը, ուր պահվում էին սիմենտալ, շվից ու տեղական ցեղային կովեր, այս տեսակից ստացվում էր անարատ ու մաքուր կաթ, որը հանդիսանում էր շվեյցարական պանրի կարևորագույն նյութը: Այդպիսի տնտեսություններից կարելի է թվել հետևյալները՝ Վարանցովկայի շրջանը, որը կազմում է այժմ Հայաստանի մասը: Սալավյովի ֆերման 100 կով, Նովոսելցովںեբի՝ 100 կով, Գոտլիբի՝ 400, Կիրիլովի՝ 300, Խանաղյանի՝ 80: Ընդամենը 5 ֆերմա, 1000 կովերով: Բացի սրանից Կարսի շրջանում գոյություն ունեին մի քանի աչքի ընկնող կիսարտելային ընկերությունների ձևի ֆերմաներ, օրինակ՝ Ռադիոնովի ֆերման» (Պանրագործությունը Հայաստանում 1924, 264):

Գործարանային կաթնատնտեսության 2-րդ ձևն այն էր, որ ամռանը գյուղական կովերը վերցնում էին կապալով և հոտեր կազմած քշում էին արոտատեղիները և ստացված կաթը ենթարկում էին մշակման:

Կաթնատնտեսության երրորդ ձևը՝ գյուղերում հիմնվում էին գործարաններ՝ արտելային կամ նույնիսկ անհատական հիմունքներով, և ազգաբնակչությունից հավաքած կաթը մշակում էին: Այս ձևով հավաքած կաթը այնքան էլ անարատ չէր և դրանից լավ տեսակի պանիր ստանալ անհնար էր: Այս կարգի գործարանները՝ ոչ ընտիր հումքի պատճառով՝ մեծ հաջողություն չէին ունենում: 1914 թ. սկսված համաշխարհային պատերազմը ծանր հարված է հասցնում մեր երկրի տնտեսությանը: 1918 թ. թուրքական բանակի արշավանքը, հերթական հարվածն է հասցնում մեր երկրի կաթնատնտեսությանը և ոչնչացնում շուրջ վեց տասնյակ տարիների ձեռք բերած աշխատանքի մշակույթն այդ ասպարեզում:

Մի ժամանակ ծաղկուն այդ գործարանային կաթնատնտեսությունների վիճակը 1918 թ. հետևյալն էր. Կարսի, Արդահանի, Կաղզվանի գործարանները գոյություն չունեին: Նախկին Բորչալուի գավառում ավերվել էին լավագույն ֆերմա-

ները՝ Գոտլիբի, Ամմետեր յեղբայրների, Կուչենբախի և մյուսների գործարանները: Գոտլիբի 400 ցեղային կովերը մորթվել են որպես մսացու: Գանձակի նահանգի գործարանը նույնպես հիմնովին ոչնչացված էր: 1918 թ. շվեյցարական պանրի արդյունաբերությունը «հազիվ հասնում է 8000–10000 փթի, վորը կազմում է նախապատերազմյան արդյունաբերության 10 – 12 տոկոսը» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/218, 266): Վարանցովկայի շրջանում կազմակերպված անհատական ֆերմաներ այդ պահին գոյություն չունեին, միակ ձևը կաթնատնտեսական արտելներն էին, որոնք նոր ձևավորման շրջանում էին: Չէինք կարող անտեսել այն առաջարկները, որոնք կարծես հրամայականներ էին և մատնանշում էին ինչպես զարգացնել այս ճյուղը. **Ինչ է հարկավոր**.

«1. Հայաստանի գյուղացին անասուններ չունի, 2 կով ունեցող ընտանիքը համարվում է բաղդավոր, տվեք նրան կով,

2. Հայաստանի գյուղացին իր յերկրի արոտատեղիների տերը չե և նրանց ոգտագործել չի կարողանում, տվեք նրան այդ հնարավորությունը, 3. Հայաստանի գյուղացին հետամնացե, ռացիոնալ կաթնատնտեսության մասին հասկացողություն չունի, տվեք նրան կաթնատնտեսության մասին հասկացողություն ու կաթնատնտես մասնագետներ» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/246, 268): Այս բնագավառում ունեցած փորձը հետագայում տվեց իր արդյունքները, որն օգտագործվեց նաև խորհրդային շրջանում:

Անհնար է չխոսել Հայաստանի կոոպերացիայի մասին: ՀՊԹ-ում պահվում են առաջին սպառողական կոոպերացիաների և 1917–1920 թթ. Հայկոոպի մասին մեծ տեղեկատվություն պարունակող նյութ, որը նույնպես կօգնի տնտեսության մասին մեր խոսքն ամբողջացնելուն: Ադոն մանրամասն ուսումնասիրել է այս ոլորտը և կազմել վիճակագրություն: Առաջին սպառողական ընկերությունը Հայաստանում հիմնվել է 1901 թ. Մեղրի ավանում: Այդ ժամանակ Անդրկովկասը դեռ հասկացողություն չուներ կոոպերացիայի մասին ո՛չ գյուղերում, ո՛չ էլ քաղաքներում: Սպառողական ընկերություն հիմնելու միտքը Մեղրիում ծագում է դեռևս 1899 թվին, երբ ձեռնարկողներից մեկը՝ Ե. Վարդանյանը դիմում է Ռիգայի պոլիտեխնիկումի մեղրեցի ուսանող Ա. Դանիելյանին, ուղարկելով նրան համապատասխան գրականություն և խնդրում նրանից այդ հարցի վերաբերյալ կարծիք հայտնել: Երբ ստացված կարծիք-նամակի բովանդակությունը հայտնում է ինստիտուտի քաղաքատնտեսության պրոֆեսորին. «Նա պահ մը վարանքով նայելով վրաս, հանկարծ բացականչեց, «Боже мой» (Աստված իմ) այս ինչ եմ լսում, մինչ մենք կարծում ենք, վոր Կովկասը կիսավայրենի յերկիր է, բայց այսօր պարզվում է, վոր այնտեղ մտածողներ կան սպառողական ընկերություն հիմնելու մասին» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, 839/199, 1):

1914 թ. Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո առաջին սպառողական խանութը, որ բացվել է Երևանում, դա «Ինքնօգնություն» («Самопомощь») ընկերությունն էր, որը ցարական պաշտոնյաների համար էր: Ապա հիմնվել է երկրորդը՝ բոլոր քաղաքացիների համար, դա «Էկոնոմիա» ընկերությունն էր: Այս ընկերությունը մեծ գործ է կատարել, այն ուներ իր փուռը, որն իր ժամանակին «հացի կրիզիսի յենթարկված ազգաբնակությանը մեծ ծառայություն

արեց: Այս ընկերության հիմքի վրա բարձրացավ ներկա բանկոոպի շենքը, վորը այսօր Յերևանի շուկայի առանցքն է և այս ընկերությունից ծագեց Հայկոոպը» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, 839/199, 13):

Ամփոփ ներկայացնենք, թե ինչ վիճակում էին կոոպերացիաները 1917–1920 թթ.: 1917 թ. Հայաստանում գոյություն ունեին 41 սպառողական ընկերություններ, որոնցից 3-ը՝ Երևանում: 1918 թ. հունվարի 1-ին միության մեջ անդամագրված կային հետևյալ կոոպերատիվները՝ Երևան քաղաքում՝ 25-ը, Երևանի գավառում՝ 41-ը, Էջմիածնի՝ 37-ը, Նախիջևանի՝ 28-ը, Շարուր-Դարալագյազի՝ 24-ը, Նոր- Բայազետի՝ 19-ը, Սուրմալուի՝ 19-ը, ընդամենը՝ 193 կոոպերատիվներ:

Անդամագրված կոոպերատիվներ կային նաև Ալեքսոլի (Շիրակի) միության մեջ՝ 60-ից ավել, Նոր Բայազետի միության մեջ՝ 10-ից ավելի: Կոոպերատիվների ընդհանուր թիվը հասնում էր 270-ի (1918 թ. հունվարի դրությամբ):

Սակայն 1918 թ. թուրքական արշավանքից հետո, երբ լուծարվեց սեյմը, ժողովուրդը հարյուր հազարներով տեղահան եղավ, գավառները, գյուղերը դատարկվեցին, նրանց հետ անհետացան նաև կոոպերատիվները: Ըստ Հայկոոպի վիճակագրական տեղեկությունների՝ 1919 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում կային ընդամենը 27 կոոպերատիվներ, որոնցից «Յերեվանում՝ 6-ը, Յերեվանի գավառում 8-ը, Էջմիածնի գավառում՝ 7-ը, Դարալագյազում՝ 1-ը, Նոր Բայազետի գավառում՝ 5-ը: Մեկ տարվա ընթացքում վոչնչացել էին 270-ից 243-ը» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/199, 15): Թուրքերի հետ քաշվելուց հետո, երբ դրությունը մեղմվել էր, կոոպերատիվները սկսեցին վերաբացվել: Փոխվել էր ընկերության անունը՝ «Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների Միություն», կրճատ՝ Հայկոոպ: Կազմվել էր հատուկ կազմա-հրահանգչական բաժին: Նոր վարչության մեջ էին՝ 1. Ռ. Տեր-Հարությունյանը, 2. Գ. Տեր-Մկրտչյանը, 3. Պ. Ղարախանյանը, 4. Ջ. Կորկոտյանը, 5. Ա. Շահնազարյանը: Նորընտիր վարչությունը զարկ տվեց արտադրական ձեռնարկներին՝ ընդարձակել է հողաթափերի (չստերի) արհեստանոցը, հիմնել օճառի գործարան, որը գոյություն ուներ նաև խորհրդային շրջանում: Գործի է դրել մրգերի և այլ տեսակի պահածոների գործարանը, և ձեռնարկել գինեգործություն և օղեգործություն:

Մի խոսքով, Հայկոոպում սկսվել էր ապաքինման շրջան, թեև դրամի կուրսի հետևողական անկումը խանգարում էր Միության գործունեությանը: 1919 թ. ավելի հուսադրող էր. «Հայկոոպը այդ տարի ունեցել է վաճառք 14 842 851 ռուբլի, որից կոոպերատիվներինը՝ 11 267 237 ռուբլի, այլ հիմնարկներինը՝ 3 576 613 ռուբլի այս թվերը ներկայացնում էին այդ շրջանի բոնների արժեքը» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/199, 21):

Հայկոոպը 1920 թ. ոտք է դրել բավականին առողջացած: Երկրի ժամանակավոր խաղաղությունը հնարավորություն էր տվել շունչ առնելու կոոպերացիային և այս հանգամանքը անդրադարձել էր Հայկոոպի վրա: Կանոնավոր՝ երկու շաբաթը մեկ, լույս էր տեսնում «Հայաստանի կոոպերացիա» թերթը, որի հրատարակությունը սկսվել էր 1919 թ. սկզբից: Լիազորների 3-րդ համագումարում ընտրվել է նոր վարչություն, որը գոյատևել է 6 ամիս: 1920 թ. հուլիսի 1-ի դրությամբ սպառողական կոոպերացիայի ցանցը ընդգրկում էր՝ « Յերեվան քաղաք՝ 8, անդամների

թիվը՝ 11345, Յերեվանի գավառ՝ 62, անդամ՝ 11366…… ընդամենը՝ 286 կոոպերատիվներ՝ 112,957 անդամներով» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/199, 22)։ Աճը տեսանելի է անզեն աչքով։ Ուսումնասիրել ենք նաև Հայկոոպի վիճակագրական բաժինը[10] 1918–1919 թթ. ապրանքների բաշխման տեսակետից, որտեղ նույնպես թվերը խոսուն են և թույլ են տալիս եզրահանգումների։ Հետևելով վիճակագրությանը (կատարվել է ապրանքների բաշխումը կոոպերատիվներին–Էջմիածնի գավառ, Երևանի գավառ, Երևան քաղաքին, Սուրմալու գավառ, Նոր Բայազետ և այլն, և ոչ կոոպերատիվներին)՝ մեզ թույլ ենք տալիս հանգելու այն հետևությանը, որ կոնկրետ Երևան քաղաքում բաշխման արդյունքում վերադարձվել է 1918 թ.՝ 355, 186 ռուբլի 85 կոպեկ, 1919 թ.՝ 2,953, 774 ռուբլի 75 կոպեկ։ Էջմիածնի գաւառ՝ 1918 թ.՝ 458, 338 ռուբլի 99 կոպեկ, 1919 թ.՝ 2,491, 200 ռուբլի 84 կոպեկ (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ 839/223)։ Այս ցուցանիշները տնտեսության աճի արդյունքի մասին են խոսում, եթե կատարենք համեմատականներ 1918 թ. և 1919 թ. հունվարի դրությամբ։ Ոչ կոոպերատիվներին ամբողջ տարին բաց է թողնված 1,113,217 ռուբլի 10 կոպեկ, նրա մեջ մտնում են զանազան հիմարկներ՝ Ամերիկյան կոմիտե, Ջօրամասեր, Պարենի նախարարություն, Հայկօօպի ծառայողներ, որից առաջին կիսամյակում՝ 370, 339 ռուբլի 27 կոպեկ։ Նույնպես նկատելի են աճի տեմպերը։ Ծանոթանանք նաև օրինակելի կոոպերատիվների ցանկին, որը, կարծում ենք, խոսուն է տնտեսությունը ներկայացնելիս, առավել արժեքավոր են կարճ մեկնաբանությունները։

«Որինակելի կոոպերատիվներ

1. Մեղրիի հնագույն կոոպերատիվը, վորի գործնեությունը շարունակվում է

2. Յերեվանի բանկոոպը – Առաջին կոոպերատիվը իր կատարած նվաճումներով՝(շուկայի գրավում) Մեծ խանութ։

3. Ղամարլու[11] – բազմախանութ, Ողու յեվ կոնսերվայի գործարաններ, Ջստերի արհեստանոց, հաշվապահությունը թույլ։

4. Եջմիածին – Աճող առեվտուր, լավ դրված հացի գործ յեվ ճաշարան։ Հաշվապահությունը կանոնավոր։

5. Ղարաքիլիսա[12] – Ընդարձակ առեվտուր, հյուրանոց, փուռ, որինակելի հաշվապահություն։

6. Ղափան – Բազմախանութ, գործունյա յեվ կենսունակ, չնայած հաղորդակցության դժվարին պայմաններին։

7. Ղուրդուղուլի[13] – բազմանդամ յեվ հարուստ իր միջոցներով

8. Աղբաշ[14] – գյուղական փոքրիկ կոոպերատիվ, բայց ձեռներեց։ Գինեգործություն։

9. Դավալու[15] – գյուղական փոքրիկ կոոպերատիվ, բայց առողջ հիմքերի վրա գործող» (Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/222, 1)։

---

10 Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ 839/223 ա, բ։

11 Նախկինում՝ Հեզլու-Ղամարլու, այժմ՝ Մեծամոր։

12 Ղարաքիլիսա (սև եկեղեցի), մինչև 1935 թ. անվանվել է Ղարաքիլիսա, 1935–93 թթ.՝ Կիրովական, 1993 թ.-ից՝ Վանաձոր։

13 Ներկայիս Արմավիր գյուղը։

14 Ներկայիս Արտաշատի շրջանի Արևշատ գյուղը։

15 Ներկայիս Արարատ գյուղը։

Ի պատիվ մեր կառավարության և խորհրդարանի, Հանրապետության անկախության երկրորդ տարեդարձին տնտեսությունը բռնել էր բնականոն զարգացման ուղի, երկրի արդյունաբերությունն ու բնական հարստությունները բարելավվում և օգտագործվում էին: Հարկավոր էր դրամական աջակցություն, որպեսզի Հանրապետությունը միանգամից ոտքի կանգներ: ՀՀ կառավարությանը հաջողվեց որոշ աշխատանքներ իրականացնել, կնքվեցին տնտեսական պայմանագրեր:

Հայաստանի կառավարությունը կյանքի կոչեց 20 միլիոն դոլարի փոխառություն: Փոխառությունը անհրաժեշտություն է դառնում, որին դիմում է այս կամ այն երկիրը, երբ այն ապրում է տնտեսական ճգնաժամ, երբ նրա ծախսերը մեծանում են շնորհիվ արտաքին հանգամանքների, արդյունաբերությունը թուլանում է, արտահանվող մթերքները համեմատած ներմուծվող ապրանքներին՝ պակասում: Փոխառությունը «խելացի տնտեսի ձեռքում այն կարևոր զէնքն է, որով հաւասարակշռում է երկրի տարեկան մուտքն ու ելքը և թոյլ չի տալիս պետութիւնը կանգնի այն ծանր դրութեան առջև, որը կոչվում է պետական սնանկություն» («Ռազմիկ», 1920, № 8, 4): 1920 թ. հունիսի 10-ին ընդունվեց «Օրենք Հայաստանի անկախության փոխառության մասին»: Սա անդրանիկ փոխառությունն էր, ինչն իրավամբ կոչվեց «Անկախության» և որը 6 տոկոսով էր և թողարկվել էր 10 տարի ժամկետով (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 165, թ. 56: ՀՀ պառլամենտի օրենքներ 1998, 334): Այսօր ՀՊԹ-ում են պահվում այդ փոխառությանը նվիրված 2 պաստառներ (ՀՊԹ, ՆԳՊՖ, 385/1: ՀՊԹ,ՆԳՊՖ, 385/2), որոնք տպագրվել են Թիֆլիսում: Դրանցից մեկի նկարիչը Լ. Հազարապետյանն է, այն տպագրվել է Դեմուրովայի վիմագրատանը, մյուսինը՝ Ս. Գաբայանն է, տպագրված Բիխովի վիմագրատանը: Ալ. Խատիսյանը գրում է, որ «Փոխառության» օրինագծի մշակման նպատակը ձևակերպվել է հետևյալ կերպ. «Վերականգնել Հայաստանի տնտեսական վիճակը և արդյունաբերությունը և ամրացնել նրա դրամական շրջանառությունը»: ՀՊԹ-ում է գտնվում նաև Մ. Բաբայանի միջոցով ստացված Հայաստանի Անկախության փոխառության № 2824 անդորրագիրը, կնքված 1920 թ. օգոստոսի 27-ին՝ ՀՀ ֆինանսների նախարար Աբրահամ Գյուլխանդանյանի կողմից:

Փոխառությունը պետք է իրականացվեր հայկական գաղութներում, և Ալ. Խատիսյանին գործուղել են այն իրականացնելու: Ալ. Խատիսյանի այցը և դասախոսությունը՝ դրամահավաքի շրջանակներում, լուսաբանել են նաև «Արև»[16] և «Յուսաբեր»[17] թերթերը: Ալեքսանդրիայում դասախոսության ժամանակ նա ներկայացրել է ՀՀ-ում տիրող վիճակը, նշել, որ եթե չլիներ ամերիկյան օգնությունը, մեր ժողովուրդը չէր գոյատևի, և չպետք է մոռանանք «մեր երախտագիտութեան պարտքը Ամերիկային»: Նա նշել է, որ հանրային կրթությունն անվճար է, և որ ՀՀ-ն «բաց է դրամագլուխներու և առևտուրի առջև և կառավարութիւնը պիտի պաշտպանէ վաճառականութիւնը և պիզնեսը» («Ձահակիր», 2020, 8): Ալ. Խատիսյանն ավելացրել է նաև, որ կան լուրջ խնդիրներ, մասնավորապես ճանապարհածախսի պատճառով չեն կարող արտասահմանից փոխադրել գյուղատնտեսական գործիքներ, շինանյութեր, հագուստ, ուտելիք, բժշկական, գրենական պիտույքներ, կա թղթի համատարած պակաս՝ դրամ չլինելու պատճառով:

16 «Արև» – եռօրեա թերթ, լույս է տեսել Ալեքսանդրիայում, խմբագիր՝ Միքայել Գյուրջյան:

17 «Յուսաբեր» – եռօրեա թերթ, լույս է տեսել Կահիրեում, խմբագիր՝ Ստեփան Եսայան:

Հետևաբար «իւրաքանչիւր հայու պարտականութիւնն է մասնակցիլ Հայաստանի Անկախութեան փոխառութեան...և հայ ժողովուրդը տուաւ: Տուաւ ազնուական ժեսթով, տուաւ իր կարողութեան ամբողջ ուժովը. մինչև իսկ իգական սեռը հաճոյքով մերկացաւ իր զարդեղէնէն, իսկ Թորգոմ եպիսկոպոսն ալ՝ հնդկահայերէ իրեն նուիրած թանկարժէք մատանիէն»: (Տեփոեան 1988, 81): Վերջապես Ալ. Խատիսյանը կոչ է արել. «Հայրենասիրական տուրքին վրայ աւելցնել Ոսկի ֆոնտը, որուն նպատակն է բարձրացնել հայկական թղթադրամին արժեքը» («Յուսաբեր» 1920, № 61, 1): Այս կոչն ունենում է մեծ արձագանք և 1920 թ. օգոստոս 20-ի «Արև» թերթը գրում է, որ ներկաները նվիրաբերել են ոսկի դրամներ, մատանիներ, զարդեր, ապարանջաններ, 1–20 եգիպտական ոսկու դրամական նվերներ և այլն: «Նուիրատուութիւններուն ընդհանուր գումարը կըլլայ մօտաւորապես 7 միլիոն ռուպլի» («Արև», 1920, № 46, 3) Փոխառության պաշտոնական բացումը կայացել է օգոստոսի 1-ին: Տեղին է նշել, որ հայկական ռուբլին՝ տպագրված Մեծ Բրիտանիայում 1920 թ. ամռանը, այդպես էլ չի հասցրել շրջանառության մեջ մտնել, քանի որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվել էր...

Խոսել տնտեսության մասին և չխոսել արդյունաբերությունից, մեղմ ասած, թերի կլիներ: ՀՊԹ-ում պահպանված են մի շարք նյութեր՝ այս կարևոր ճյուղի զարգացման հետ կապված: Հոդվածի համար կարևորեցինք հանրությանը քիչ հայտնի մի անտիպ նյութ՝ Ալեքսանդրապոլի մեխանիկական գործարանի մասին հուշագրություն, որը 1965 թ. հունիսի 27-ին թանգարանին էր նվիրել գործարանի հիմնադիրներից՝ Ռաֆայել Հեքիմյանը, ով իր հինգ եղբայրների հետ հիմնել էր Ալեքսանդրապոլի գործարանը (Այդ շրջանում Տեր-Ավետիքյանները[18] հիմնել են մեխանիկական գործարան Երևանում):

Կարևորելով Ալեքսանդրապոլի մեխանիկական գործարանի հիմնադրման պատմությունը (ՀՊԹ, ՆՊՖ 949)՝ մեր ուշադրությունից չվրիպեցին զուգահեռ ներկայացվող այն արտադրական ճյուղերը, որոնք այդ տարիներին գործել են Ալեքսանդրապոլում: Սակայն, մինչ բուն նյութին անցնելը, նշենք, որ Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին Ալեքսանդրապոլը գավառական, բայց միևնույն ժամանակ արհեստների և արվեստների քաղաք էր: Շենքերը հիմնականում կառուցված էին սև և կարմիր տուֆից, միահարկ էին և զուրկ կոմունալ տարրական հարմարություններից: Բնակչության մեծ մասը անգրագետ էր: 1918–20 թթ. անբարեկարգ վիճակում էին քաղաքի փողոցների մեծ մասը: Երբ անձրևում էր, առաջանում էին ջրափոսեր և ցեխ, դժվարացնում բնակչության երթևեկը: 30 հազար բնակչությամբ քաղաքում ընդամենը հինգ բաղնիք կար[19]: 1919–1920 թթ. Ալեքսանդրապոլի «քաղաքագլուխ էր Գարեգին Լևոնյանը, ով հանրահռչակ աշուղ Ջիվանու որդին էր, նա կարճ պաշտոնավարեց, հետո դարձավ անվանի գիտնական» (Հարությունյան, 1996, 8): Փորձենք ներկայացնել Ալեքսանդրապոլի

18 Նրանցից Երվանդ Նազարի Ավետիքյանը եղել է Երևանի մեխանիկական գործարանի տնօրենը: ՀՊԹ-ում պահպանվել են որոշ լուսանկարներ և փաստաթղթեր ԳՕՖ (գիտաօժանդակ ֆոնդ) 1375 համարի ներքո:

19 «Ուռումների բաղնիք»՝ Աբովյան փողոցի վրա, «ցենտրալնի»՝ Արտաշն էր շահագործում, Բեհբութովսկի՝ հետո Գորկու փողոցի բաղնիքները պատկանում էին Գևորգ աղային և կոչվում էին նրա անունով:

մեխանիկական գործարանի պատմությունը՝ 1905 թվականից մինչև մեր ուսումնասիրման ժամանակահատվածը: Միտումնավոր, թափանցելով կենցաղի մեջ, ներկայացնում ենք նաև աշխատողների վաստակը, առօրյա ծախսերը, որոշ ապրանքների գները: Կարծում ենք՝ այն կօգնի թեմայի շրջանակներում տնտեսությունը տարբեր տեսանկյուններից վերլուծելու և ամբողջացնելու:

Հեքիմյան եղբայրները փականագործություն սովորել էին իրենց հորից՝ Հովհաննես Աբրամովիչից, պատրաստելով տարբեր տիպի մկրատներ և դանակներ՝ մսագործական, խոհարարական, այգեգործական, արտադրական և այլն: Նրանց ամենօրյա վաստակը կազմել է 3 ռուբլի, հանած բոլոր նյութերի ծախսերը: Դեռևս 1892 թ. նրա 2 եղբայրները՝ Թադևոսն ու Գրիգորը կառքով Ալեքսանդրապոլից մեկնում են Աղստև (այդ ժամանակ դեռ երկաթուղի չունեինք) այնտեղից էլ՝ Բաքու: Բալախանում աշխատել են Մանթաշովի գործարանում՝ պատկառելի աշխատավարձով: Ապա նրանց է միացել Մկրտիչը, աշխատելով խառատ, հետո վարպետ՝ Խատիսովի գործարանում, ստանալով օրական 1 ռուբլի 80 կոպեկ:

1905 թ., երբ սկսվում են հայ -թաթարական բախումները, թողել են Բաքուն, վերադարձել Ալեքսանդրապոլ: Աշխատած գումարով՝ 550 ռուբլի, Թիֆլիսից ձեռք են բերել մեկ խառատային հաստոց և մեկ ներքին այրման շարժիչ և բացել խառատա-փականագործական արհեստանոց: Սակայն ունեցել են դժվարություններ և եղբայրները նորից մեկնում են Բաքու, աշխատել «Վոտան» գործարանում: Ամենակրտսեր եղբայրը՝ Ռաֆայելը մնում է Ալեքսանդրապոլում, փականագործ Արամ Կորկոտյանին առաջարկելով միասին աշխատել, կիսելով աշխատավարձը: Շուտով գործերն այնքան լավ են գնում, որ նույնիսկ պատվերները չեն հասցնում: Ռաֆայելը եղբայրներին խնդրում է վերադառնալ և թուջա (չուգուն)-պղնձի ձուլման գործ սկսել: 1908 թ. սկսում են զբաղվել ապագա արտադրության նախագծով՝ թուջա-պղնձի ձուլման և մեքենաշինական գործոնների (մասերի) թողարկմամբ: Կաթողիկե եկեղեցու հովիվը, գիտակցելով գործի կարևորությունը, եղբայրներին է տրամադրել, 18 լուծույթների տարածքը: Այսպես, սկսում են քիչ-քիչ վերակազմավորել գործարանը՝ սարքավորելով ու մեխանիզացնելով. «Տեղակայեցինք Օտտո-Դեյցի 6 ձիաուժանոց նոր ներքին այրման շարժիչ, որը մենք վարձույթով վերցրել էինք Բաքվի առևտրի տնից: Նրանցից մենք վերցրեցինք նաև պտուտակային խառատային հաստոց, զուգահեռաբար տեղակայելով մեր փոքր խառատային հաստոցի հետ: Տրանսմիսիոն լիսեռի օգնությամբ դրանք միացրեցինք իրար, որպեսզի կարողանանք միաժամանակ երկու հաստոցները գործարկել» (ՀՊԹ, ՆՊՖ 949, 7):

Ձուլման արտադրամասի համար անհրաժեշտ էր նախագծել շարժական վերամբարձ կռունկ՝ հալած թուջի մեծ տարաները բարձրացնելու համար: Ողջ աշխատանքը կատարում էին հինգ եղբայրներով, միացել էր նաև փականագործ, լավ վարպետ Արամ Կորկոտյանը: Արտադրությունում աշխատում էին պատանիներ, ովքեր ի վիճակի չէին դպրոց հաճախել, նրանց սովորեցրել են մասնագիտական հմտություններ: Շուտով արտադրել են մամլիչ՝ «Տիտան» անունով, դեզ մամլելու համար, սակայն Պետերբուրգից եկել է գործարանի ներկայացուցիչը և դժգոհել ինչու՞ են իրենց արտադրանքի անունը դրել մամլիչին, սակայն երբ համոզվել է կառուցվածքի տարբերության մեջ, ետ է վերադարձել: Շուտով ստանում են շատ պատվերներ նաև Ալավերդու պղնձահանքերից և այլ հանքերից՝ թուջի տարատե-

սակ ձուլածոների համար գծագրեր և այլն: Զուլում էին «տուրբինների աշխատանքային անիվներ, վառարանային խողովակներ ու սարքեր, հերմետիկ դռնակներ, ատամանիվներ, վանդակաճաղեր և հիվանդանոցների համար մահճակալներ: Հինգ ամիս անց մոնտաժեցինք դինամո՝ երեկոյան աշխատանքների ժամանակ լուսավորությունն ապահովելու համար: Թուջի ձուլածոն իրականացվում էր մեկ ցերեկվա և գիշերվա ընթացքում» (ՀՊԹ, ՆՊՖ 949, 8): Հետաքրքիրն այն է, որ ընդամենը ունենալով մեկ խառատա-փականագործական արհեստանոց, շուտով այն վերածվում է թուջի-պղնձի ձուլման և մեքենաշինության գործարանի՝ համարյա ոչնչից, և դրա հիմքում ընկած էր հորից ժառանգած վարպետության իմացությունները: Իրենց կառուցած շինության վերջնամասում, գործավարության, թղթաբանության, հաշվապահության և գծագրումների համար հարմարեցրել են նաև փոքրիկ գրասենյակ:

Ալեքսանդրապոլում այդ ժամանակ վատ էր էլեկտրական լուսավորության հարցը, այդ պատճառով ինժեներ Ա. Պ. Զախմախսազյանը դիմել է եղբայրներին, խնդրանքով, որպեսզի քաղաքային զբոսայգու թատրոնի շենքում, որտեղ նա ցանկանում էր կինոթատրոն բացել, լուսավորություն անցկացնեն: Նման մշակութային հաստատությունն անհրաժեշտություն էր և ցանկալի քաղաքի բնակիչների համար: Պայմանավորվածություն են ձեռք բերել երեկոյան կինոթատրոնի լուսավորության համար ամսական հարյուր ռուբլի վճար և իրենց ընտանիքի համար թատրոնում ապահովել մեկ օթյակ: Մեխանիկական գործարանում բանվորների աշխատավարձը տրվում էր ամեն ամիս: «Գործարանի եկամուտը տարեկան կտրվածքով կազմում էր մոտավորապես 8–10 հազար ռուբլի» (ՀՊԹ, ՆՊՖ 949, 9): Երբ ուսումնասիրեցինք քաղաքում մյուս արհեստավորների եկամուտները և ապրանքների գները, պարզ դարձավ այս գործարանում աշխատողների վաստակի առավելությունը: Քաղաքը երեկոյան լուսավորվում էր 11 գծանոց լամպերի լապտերներով: Ամեն թաղամասում պատի վրա բարձր ամրացված էր լապտեր:

Ալեքսանդրապոլում կային մի քանի մեծահարուստ ընտանիքներ՝ ըստ կարգերի: Առաջին կարգի միլիոնատեր հարուստներից էր Ղունկիենց Ղունկի աղան: Հարստությունը խորհրդանշող թիթեղից պատրաստված հատուկ դրոշակ էին ամրացնում առանձնատան ճակատին: Նրանք ունեին խանութների շարք և 2 բնակելի շենքեր: Առաջինը՝ Աբովյան փողոցի վրա, հետագայում հանձնվեց քաղաքային գրադարանին, հետո զբաղեցրել է քաղաքային դատախազությունը: «Նրան էր պատկանում նաև Սվերդլովի փողոցի վրա 1879 թ. կառուցված առանձնատունը, որտեղ 1918–1920 թթ. թուրքական դեսպանատունն էր: Այժմ այդ շենքում քաղաքային արխիվն է տեղավորված» (Հարությունյան 1996, 27):

Քաղաքի տնտեսության դեմքն ավելի պարզ պատկերացնելու համար ներկայացնենք Ալեքսանդրապոլում այդ ժամանակ գործող ձեռնարկությունները և արհեստանոցներն՝ իրենց աշխատողներով և վերջիններիս ստացած աշխատավարձերը:

Գարեջրի գործարանը պատկանում էր Ձիթօղցյաններին[20], Գարեջրի գործա-

20 Ձիթօղցյանները մեծ ու հարուստ տոհմ են եղել Ալեքսանդրապոլում, նրանց նախահայրը՝ «Հաջի Պետրոսը» ոտաբոբիկ գնացել է Երուսաղեմ և վաստակել այդ տիտղոսը:

բանը՝ Զագինյան Համազասպին[21], Օճառի գործարանը՝ Ծատուրյան Միսակին, Պղնձի ձուլման և մեխանիկական արհեստանոցը՝ Թոքմաջյաններին, Հացահատիկի տեսակավորման համար քամհարման արհեստանոցը՝ Ալանակյանին, Տոմատի՝ Պոմիդորի արտադրությունը՝ Արտաշես Թայանին[22], Երշիկի արտադրությունը՝ Հովհաննես Սանոյանին[23], Հրուշակեղենի արտադրությունը՝ Երանոսյանին[24], Աղյուսի-կղմինդրի գործարանը՝ Հակոբ Քանդարյանին, ևս մեկ Աղյուսի-կղմինդրի գործարան՝ Գրիշային: Լիմոնադի գործարանը՝ Մկրտիչ Կանեցյանին[25], ևս մեկ Լիմոնադի գործարան՝ Կարապետ Մկրտչյանին:

Կաշվի դաբաղման գործարանում՝ «դաբախանա», աշխատում էին քաղաքի կաշեգործները[26]:

Ալեքսանդրապոլ քաղաքում արհեստանոցները տեղակայված էին շարքերով:

Դարբնոցների շարքը՝ «դամրչնոց» – Յուրաքանչյուր դարբին իր արհեստանոցն ուներ. նման արհեստանոցները ութն էին: Լավ վարպետները ունեին իրենց ձեռքի տակ 6–7 բանվոր-մուրճահար: Հիմնականում պատրաստում էին գյուղատնտեսական սարքավորումներ՝ բահեր, գութան, փոցխեր, եղաններ, մանգաղներ, կեռ օղակներ, ձիու պայտեր, վերջիններիս համար մեխեր, արհեստավորական շղթաներ և այլն: Հայտնի էր Չախմախովենց[27] տոհմը, տոհմահայր Հովակիմ Չախմախչյանը, բացի գութան պատրաստելուց, զբաղվել է «չախմախ» կոչվող հրացան պատրաստելով: Այդ պատճառով տոհմին տրվել է այդ անունը:

Պղնձագործների շարքը – Այս վարպետները իրենց արհեստանոցներում կարմիր պղնձից պատրաստում էին խոհարարական մեծ կաթսաներ և խոր «ղազաններ» երկու կախ ընկած բռնակներով, ինչպես նաև՝ տարբեր չափերի կաթսա-

---

Նրանք ունեին գարեջրի գործարան, որը կառուցված էր ներկայիս գուլպեղենի արտադրական միավորման տեղում: Մինչև վերջին տարիները շենքի հին պատին քարից տակառ էր փորագրված:

21 Հավանաբար խոսքը մեծահարուստ Ծաղիկյան Համազասպի մասին է, ով իր առանձնատանն առընթեր կառուցել էր գարեջրի գործարան, որը վթարային վիճակում էր, հետագայում այստեղ տեղափոխվեց «Կումայրի» արգելոց – թանգարանը, և 1862թ. կառուցված Սբ. Կարապետ եկեղեցին, հետագայում դարձրին գարու պահեստ և հանձնվեց գարեջրի-ածիկի գործարանին:

22 Արտաշես աղա Տայոնց, ում գործարանի ծաղկավոր արտադրանքով էր պատած բաղնիքների հատակը:

23 Եղել է նաև Արշալույս Սանոյանը, ով ֆիզիկապես շատ ուժեղ էր:

24 Երանոսյան եղբայրները մասնագիտությամբ հրուշակագործներ էին, նրանց տունը գտնվում էր Աբովյան փողոցի դեղատան մոտ: Հարսանյաց սեղանները զարդարում էին նրանց փախլավան, շաքարլոխումը և այլն:

25 Դեռևս 1902թ. Երևանի նահանգապետի կողմից թույլատրվում է Համբարձում Քյանդարյանին Պուշկինի փողոցում կառուցել սեփական առանձնատուն, որդին Հակոբը շարունակում է հոր գործը՝ շենքի նկուղային մասում կառուցում լիմոնադի գործարան: «Լիմոնադ Կարոն» բաժանում էր այն խանութներին:

26 Հայտնի դաբաղագործ էր Հակոբ Նահապետյանը, ում կառուցած միհարկանի տունը դարձրեցին դպրոց, որտեղ սովորել է Ավետիք Իսահակյանը:

27 Նրանց տոհմը կոչվել է նաև «Թուլումբի», որով կանչում էին Հովակիմի ավագ որդի Գևորգ Չախմախչյանին, բացի գութան պատրաստելուց, զբաղվել է նաև զինագործությամբ (Տե՛ս Հարությունյան 1996, 17):

ներ տնտեսական օգտագործման համար: Քաղաքում նման արհեստանոցները հինգն էին: Յուրաքանչյուր վարպետ աշխատում էր իր հինգ բանվորներով:

«Թիկիչնոցների» (մաշիկներ կարողներ, մաշկակար, չուստ) շարքը – Այս արհեստանոցներում վարպետները ունեին 7–8 բանվոր, որոշները՝ 3–4: Վարպետին ասում էին «թիկիչի»: Այստեղ կարում էին կանացի «մեաս» և «բաբուչ» կոշիկներ, մյուսները կարում էին ասիական տեսակի հողաթափեր հասարակ վարպետների, բանվորների ու գյուղացիների համար: Հողաթափի զույգն արժեր 30–35 կոպեկ, իսկ բոլոր գյուղացիները կրում էին չարոխ՝ տրեխ տեսակի հողաթափեր: Քաղաքում բացի մաշիկներ կարողներից կային նաև տրեխագործներ: Հայտնի հողաթափեր կարողներից էր Թադևոս Թոխսանյանը, ով կարում էր մոտավորապես օրական 100–150 զույգ: Հողաթափեր էր կարում նաև ժող. արտիստուհի Արաքսյա Գյուլզադյանի հայրը՝ ղարսեցի չուստ կարող Կարապետ Գասպարի Աձիկյանը՝ Երևանյան, ապա Սպանդարյան փողոցի վրա:

Դիրկարանոցների (դուրգար) շարքը (ատաղձագործներ) – Հյուսն վարպետները ըստ պատվերի կահույք էին պատրաստում: Դրանք հիմնականում զգեստապահարաններ, կոմոդներ, գրասեղաններ էին: Նաև պատրաստում էին պատուհանի շրջանակներ, աթոռակներ (տաբուրետներ), խնոցիներ, կառքերի համար անիվներ, արորներ և այլն:

Տակառագործները պատրաստում էին տարբեր տարողության տակառներ, փայտե փոցխեր և այլն:

Կոշկագործների շարքը – Լավ, անուն ունեցող վարպետները իրենց արհեստանոցներում աշխատեցնում էին մի քանի աշակերտ՝ 6–7 հոգի և մեկ կամ երկու օգնական: Նման արհեստանոցները քաղաքում 5–6 էին: Կարում էին կիսաճտքավոր, երկարաճիտ և սովորական կոշիկներ:

Կարուձևի արհեստանոցների շարքը – Սա Տրդատյան եղբայրներինն էր: Նրանք կոստյումների, սմոքինգների, վերարկուների և նմանատիպ հագուստի պատվերներ էին ընդունում: Լավագույն վարպետները իրենց սեփական գործվածքից կարում էին որակով ու շքեղ հագուստ: Հայտնի էր Հարությունյանների և այլոց առաջնակարգ արհեստանոցները: Կային դերձակներ, ում «թերզեր» էին անվանում: Նրանք պատվերով կարում էին արխալուղ[28] չերկեզկաներ, բիշմետներ՝տղամարդու վերնազգեստ և կանացի, այսպես կոչված, ջուբիաներ և խրխաներ՝ կանացի հագուստ Կիլիկիայի:

Քաղաքում հինգ հացաթխման արտադրամաս կար՝ համեղ կալաչներ (սպիտակ ցորենահաց), մատնաքաշ, հատուկ համեղ (յաղլիներ): Դրանք երկու չափի էին և արժեին հատը 3–5 կոպեկ: Մաղած ալյուրով պատրաստած չերեկներ՝ հացի տեսակ: Վաճառում էին տապակած ոչխարի և այծի գլուխներ՝ 7–8 կոպեկ: Եփում էին ոլոռ, կարտոֆիլը համեմում էին մանր կտրտած մաղադանոսով և կանաչ սոխով՝ 3 կոպեկ ֆունտը՝ 400 գրամ:

Հատուկ չորահաց էին թխում՝ պաքսիմատ, կավի ամաններում չանախ էին եփում՝ հատուկ ապուր, հատուկ ամաններում «թավա» անվամբ կերակուր էին պատրաստում, որտեղ կար կարտոֆիլ, սոխ, շատ կանաչեղեն:

---

28 Տղամարդու, կանացի ներսից աստառված վերնազգեստ:

Կային թոնդիրներ, որոնց թիվը քաղաքում հինգն էր, որտեղ լավաշ էին թխում, համեղ, բարակ, 400 գրամը՝ 2 կոպեկ, թխում էին բոքոն, որոնք հաճախ պատում էին կանեփով և անիսով, շատ համեղ հաց՝ 400 գրամը 2 կոպեկով:

Մսագործների շարքը «Ղասբնոց» – Քաղաքում 13 մսի կրպակ կար: Տավարի միսը հիմնականում աղքատներն էին գնում, քանի որ էժան էր՝ ֆունտն արժեր 3 կոպեկ: Իսկ ոչխարի միս գնում էր քաղաքի բնակչության մեծ մասը, և դրա ֆունտը տավարի մսի համեմատ փոքր-ինչ թանկ էր: Եթե ջահել ցլիկի կամ երիտասարդ կովի միս էր պատահում, դա հաճույքով էին գնում:

Վարսավիրական արհեստանոցները

Դրանք երկուսն էին, սափրիչները չորսն էին, որոնք ատամներ էին հեռացնում և տզրուկներ էին կպցնում: Շուկայի պարսկական մասում քայլող սափրիչներ կային, այստեղ եկած համշարներին (պարսիկներ) սափրում էին պատերի մոտ, որտեղ հարմար էր լինում:

Երեք ատամնաբույժ բժիշկներ կային.

Նրանք ընդունում էին իրենց տանը: Դրանցից լավագույնը համարվում էր բժիշկ Գալավչիները:

…..**Ապակեղենի** խանութ ունեին Մազմանյան եղբայրները, որոնց խանութից հարսանիքի կամ այլ նպատակներով հաճախ վճարովի ապակեղեն էին վերցնում, որը դարձավ իրերը վարձույթով տվող խանութի նախօրինակ: Մազմանովենց[29] տղան՝ Օնիկ (Հովհաննես) Մազմանովը մեծ աշխատանք է տարել Ղարսում: Կարսի հանձնման լուրը լսելիս՝ հայկական բանակի գնդապետը 1920 թ. հոկտեմբերի 30-ին ինքնասպան է լինում իր զինվորների մոտ (Պետրոսյան 2019, 17):

Խառատի արհեստանոցում աշխատում էին 2 եղբայրները՝ Սարգիսը և Մկրտիչը: Մի աշկերտ ամրացված էր Սարգսի հաստոցին, ով 13 տարեկան էր, ամսեկանը ստանում էր 10 ռուբլի, մյուսը՝ամրացված էր Մկրտիչի հաստոցին՝ նա 14 տարեկան էր, ստանում էր 12 ռուբլի: Գործարանի գլխավոր մեխանիկը՝ Հեքիմյան Գրիգորն էր: **Փականա-դարբնոցային** արտադրամասում աշխատում էր Կորկոտյան Արամը, որպես փականագործ, աշխատավարձը՝ ամսեկան 60 ռուբլի: Գևորգյան Բաբկենը՝ որպես դարբին, ստանում էր 50 ռուբլի աշխատավարձ: Նրանց ամրացված էին 10–14 տարեկան 3 աշկերտներ:

Ձուլման արտադրամասում, որպես ձուլող էր Յորդան Վայցեխովսկին, ով ստանում էր 60 ռուբլի, նրա աշկերտները ստանում էին 8, 10, 12 ռուբլի:

Կաղապարագործների (մոդելավորողների) արտադրամասում աշխատում էր մեծ եղբայրը՝ Թադևոսը Ներսեսի հետ, աշխատավարձը՝ 40 ռուբլի:

1918 թ.՝ թուրքերի առաջին հարձակումից առաջ, մինչև 1919 թ., ըստ Հեքիմյան եղբայրների, մեխանիկական գործարանում ոչ մի գործ չէր ձեռնարկվել, քանի որ գործարանը ազգայնացվել էր գեներալ Համազովի կողմից, նա աշխատանքից հեռացրել էր եղբայրներին առանց վճարելու:

Արդեն Հանրապետության ժամանակ «դաշնակները դարձան մեր գործարանի տերերը և սկսեցին արտադրել պարկուճներ՝ հին օգտագործածներից, որոնք մենք կիրառում էինք առանցքակալների պատրաստման համար: Պարկուճների արտադրության համար մեր գործարանում չկար մամլման արտադրամաս (բաժանմունք)» (Հեքիմյան 1965, 15): Ընդհանրապես պարկուճների արտադրության համար անհրաժեշտ է մեծ հզորության երկակի գործողության շարժաբերային մամլիչ, իսկ գործարանում անգամ ձեռքի մամլիչ չկար: Թուրքերի երկրորդ արշա-

29 Տոհմական անունը ստեղծվել է պապական արհեստից՝ պարանագործներ (մազման):

վանքի ժամանակ՝ 1920 թ., «մեր գործարանի ողջ սարքավորումը, որպես ռազմական գործարան, թուրքերը տեղափոխեցին Կարս: Դրանով ավարտվեց մեր աշխատանքը Ալեքսանդրապոլում» (ՀՊԹ, ՆՊՖ, 949, 16):

Հետագայում այստեղ եղել է «պարան արտել»: Հեքիմյան եղբայրներից ավագները զբաղվել են հողագործությամբ և այգեգործությամբ: 1924 թ. Մկրտիչ Հեքիմյանին հրավիրել են ղեկավարել արդեն Լենինականի մեխանիկական գործարանը, որը հետագայում դարձել է մամլոցա-դարբնային սարքավորման գործարանը, իսկ Ռաֆայելը, ում հուշերը մեզ օգնեցին վերականգնել Ալեքսանդրապոլի մեխանիկական գործարանի ստեղծման պատմությունը, Հայաստանի խորհրդայնացման օրերին աշխատել է Բաքվում, խորհրդային ձեռնարկությունում, հետո՝ Մոսկվայում, իսկ 1943 թվականից՝ Երևանում:

Այսպիսով, փորձ կատարեցինք ՀՊԹ-ի պահոցներում պահվող արխիվային սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանել, վերլուծել Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը, ներկայացնել տնտեսության որոշ ճյուղերի քիչ հայտնի փաստեր՝ միևնույն ժամանակ հանրաճանաչ դարձնելով թանգարանային արխիվային նյութը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86:

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1. գ. 750:

Ադոյի արխիվ, ՀՊԹ, ՆՊՖ, 839/199, 839/205, 839/218, 839/223 ա, բ, 839/246:

Հեքիմյան Ռ., Հուշեր Ալեքպոլի մեխանիկական գործարանի մասին, 1965, ՀՊԹ, ՆՊՖ, 949:

Հովհաննես Քաջազնունու արխիվ, ՀՊԹ, ՆԳՊՖ, 349:

ՀՊԹ, ԳՕՖ, 1375:

ՀՊԹ, ՆՊՖ, 1308/28:

ՀՊԹ, ՆԳՊՖ, 949

Պարբերական մամուլ

«ԱՐԵՒ» 1920 – «Արև թերթ», Ալեքսանդրիա, 1920, № 46:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐ» 1919 – «Հայաստանի աշխատաւոր» թերթ, Երևան, 1919, մայիսի 21, № 56:

«ՀԱՅՐԵՆԻՔ» 1934 – «Հայրենիք» թերթ, Բոստոն, 1934, № 4:

«ՅԱՌԱՋ» 1920 – «Յառաջ» թերթ, Երևան, 1920, հունվար, № 5:

«ՅԱՌԱՋ» 1920 – «Յառաջ» թերթ, Երևան, 1920, փետրվար, № 877:

«ՅՈՒՍԱԲԵՐ» 1920 – «Յուսաբեր» թերթ, Գահիրէ, 1920, Զ տարի, 21 օգոստոսի, № 61:

«ՔԱՀԱԿԻՐ» 2020 – «Քահակիր» թերթ, Գահիրէ, 2020, յաւելուած ԼԵ

«ՌԱԶՄԻԿ» 1920 – «Ռազմիկ» թերթ, Երևան, 1920, հունիս 16, № 6:

«ՌԱԶՄԻԿ» 1920 – «Ռազմիկ» թերթ, Երևան, 1920, № 8:

Գրականություն

ԲՈՐՈՅԱՆ 2021 – Բորոյան Ս., Մախլուտո, Յուշիկք Հայրենյաց, Երևան, ՀՊԹ, 2021:

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 2015 – Թադևոսյան Ն., Խառնարան, Երևան, 2015:

ԽԱՏԻՍԵԱՆ 1968 – Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ (1918–1920 թթ.) 1998 – Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), Կազմողներ՝ Ս. Միրզոյան, Մ. Ավետիսյան, Ձ. Հովհաննիսյան, Ա. Չիլինգարյան, ՀՀ ազգային ժողով, Պատմության կենտրոնական պետական արխիվ, Երևան, 1998:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1996 – Հարությունյան Վ., Գյումրին, նրա մարդիկ, սովորույթները, Գյումրի, 1996:

ՉԱԼԽՈՒՇՅԱՆ 1923 – Չալխուշյան Գ., Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923:

ՊԱՆՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1924 – Պանրագործությունը Հայաստանում, «Նորք» գրական, գիտական յեվ քաղաքական հանդես, Գիրք չորրորդ, Յերեվան, 1924, էջ 259–268:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2019 – Պետրոսյան Դ., 1920 թ. Կարսի ինքնասպանները, Երևան, 2019:

ՎՐԱՑՅԱՆ 1993 – Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

ՎԻՐԱԲՅԱՆ 2011 – Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., Երևան, 2011:

ՏԵՓՈԵԱՆ 1988 – Տեփոեան Պ., Նիւթեր պատմութեան համար, Մեր առաքելութեան ճամբով, Պեյրութ, 1988:

Seda Galstyan
History Museum of Armenia
sedagalstyan@yahoo.com

SOCIO-ECONOMIC SITUATION IN ARMENIA IN 1918–1920 (ACCORDING TO MATERIALS OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA)

Keywords: First Republic of Armenia, economy, agriculture, industry, grain, cooperative economy, workshop, mechanical plant.

The First Republic of Armenia was born in difficult socio-economic conditions. However, in a short time, some sectors of the economy recovered and gained new development. The Turkish campaign of 1920 dealt a new blow to economics.

The materials stored in the HMA – archives, manuscripts, records, photographs, memories of people spread in a new light on the development of some branches of economics of this period. By studying these materials, in particular the testimonies of Ado, an economist, statistician and witness of this time, we can have a complete picture of some branches of agriculture – the production of cotton, tobacco, beekeeping, sericulture, etc. It contains interesting material about cooperatives as a new industry in Armenia, where the activities of the existing network are presented.

We also consider as an important material the notes of the first Prime Minister of Armenia Hovhannes Kajaznuni in his notebook, the study of which is a new page and contains valuable information on how it was possible on that period to compare the need for grain crops and the available opportunities in a country that was just reviving.

The history of the Alexandropol Mechanical Plant, which was donated to the museum by one of its founders, Rafael Yekimyan, is interesting and inquisitive. We hope that our study will fill the gap and help discuss some sectors of the economy in a broader spectrum.

Седа Галстян
Музей истории Армении
sedagalstyan@yahoo.com

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 1918–1920 ГГ (ПО МАТЕРИАЛАМ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ)

Ключевые слова: Первая Республика Армении, экономика, сельское хозяйство, промышленность, зерно, кооперативное хозяйство, мастерская, механический завод.

Первая Республика Армении родилась в тяжёлых социально-экономических условиях. Однако в короткий срок некоторые отрасли экономики восстановились, получили новый размах. Турецкий поход 1920 года нанёс новый удар по экономике. Хранящиеся в МИА материалы – архивы, рукописи, записи, фотографии, воспоминания лиц по-новому освещают развитие некоторых отраслей экономики данного периода. Изучая эти материалы, в частности свидетельства Адо – экономиста, статиста и свидетеля этого времени, можно иметь полное представление о некоторых отраслях сельского хозяйства – производстве хлопка, табака, пчеловодстве, шелководстве и т. д. Здесь хранится интересный материал о кооперативах, как новой отрасли в Армении, где представлена деятельность действующей сети.

Считаем также важным материалом записи первого премьер-министра Армении Ованеса Каджазнуни в своей записной книжке, изучение которой – является новой страницей и содержит ценные сведения о том, как можно было тогда сравнивать потребность зерновых культур и имеющиеся возможности в только–только возрождающийся стране.

Интересна и любопытна история Александрапольского механического завода, которую передал музею один из его основателей – Рафаель Экимян. Надеемся, что наше исследование заполнит пробел и поможет обсудить некоторые отрасли экономики в более широком спектре.

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը
1918–1920 թվականներին (Ըստ ՀՊԹ-ի նյութերի)

Նկ. 1. Բաբախանյանցի գինու գործարանի՝ գինու շիշը պիտակով:
ՀՊԹ, ՆՊՖ 1159:

Նկ. 2. Հայաստանի անկախության ամերիկյան 20 000 000 դոլարի փոխառության պատգամ, 1920 թ.:
ՀՊԹ, ՆՊՖ 385/2:

Նկ. 3. Հայաստանի անկախության ամերիկյան 20 000 000 դոլարի փոխառության պատգամ:
ՀՊԹ, ՆՊՖ 385/1:



Նկ. 4. ՀՀ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունու նոթատետրի գրությունից, 1919 թ.:
ՀՊԹ, ՆՊՖ 349:



Նկ. 5. Կարսի քաղաքագլուխ Հ. Նորհատյանին ուղղված գրություն՝ քաղաքի պարենավորումն ապահովելու համար վարկ բացելու կապակցությամբ, 1920 թ.:
ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 185, թ. 11:

Նկ. 6. Հայաստանի անկախության փոխառության անդորրագիր,
1920 թ. օգոստոսի 27:
ՀՊԹ, Մ. Բաբայանի արխիվից:

Նկ. 7. Օգնություն հայ գաղթականներին, 1918 թ.:
ՀՊԹ, ՆՊՖ 811:

Նկ. 8. Երևանի մեխանիկական գործարանի աշխատողները, կենտրոնում՝ գործարանի հիմադիր տնօրեն՝ Երվանդ Զաքարի Տեր-Ավետիքյանը:
ՀՊԹ, ՆՊՖ 1375/5:

Նկ. 9. Տեր-Ավետիքյանի մեխանիկական գործարանի խորհրդանշանով հաշվի բլանկը:
ՀՊԹ, ՆՊՖ 1375/8: